



«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» հասարակական կազմակերպություն

Երևան, Փ. Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ: (37410) 580219, 563363, ֆաքս: (37410) 581102, E-mail: info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

03.07.2023թ.

ՀՀ Վայոց ձորի մարզպետ
Պարոն Արարատ Գրիգորյանին

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի
«Հետք» թերթի լրագրող
Գրիշա Բալասանյանից

Հեռ. 093-82-26-80, e-mail: grisha.balasanjan@hetq.am

Հարգելի պարոն Գրիգորյան,

«Հետք» էլեկտրոնային թերթը հողված է պատրաստում: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6,9,12-րդ հոդվածների հիմքով խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն հետևյալի մասին.

1. 2020-2023թթ. մարզում քանի՞ հակակարկտային կայան է տեղադրված և ի՞նչ տեսակի կայաններ են, ի՞նչ հզորության: *Տեղեկատվությունը տրամադրել ըստ տարիների, համայնքների և գյուղերի՝ նշելով կայանի տեսակը և հզորությունը:*
2. Ու՞մ կամ որ մարմնի կողմից են սպասարկվում հակակարկտային կայանները: *Տեղեկատվությունը տրամադրել ըստ համայնքների և կայանների:*
3. 2020-2023թթ. հակակարկտային կայանների սպասարկման համար յուրաքանչյուր համայնքում տարեկան որքա՞ն գումար է հատկացվել (նախատեսվել): *Տեղեկատվությունը տրամադրել ըստ տարիների, համայնքների և գյուղերի՝ նշելով գումարի չափը:*
4. Որտե՞ղից կամ ում կողմից են կառավարվում հակակարկտային կայանները և ինչ սկզբունքով են աշխատում:
5. 2020-2023թթ. մարզում որքա՞ն է կազմել կարկուտի հետևանքով գյուղատնտեսությանը պատճառված վնասի չափը: *Տեղեկատվությունը տրամադրել ըստ տարիների, համայնքների և գյուղերի՝ նշելով գումարի չափը:*
6. 2020-2023թթ. հակակարկտային կայանների արդյունավետությունը որքա՞ն է կազմել:

Կանխավ շնորհակալություն

Դիմող՝ Գ. Բալասանյան

